# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուսման վճարի մասնակի փոխհատուցման/զեղչային/ համակարգից օգտվելու համար 2023թ. օգոստոսի 28-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում քոլեջ կարող են դիմում ներկայացնել 2023թ.վճարովի ուսուցմամբ ընդունված ուսանողները, ինչպես նաև բարձր կուրսերում վճարովի հիմունքներով սովորողները:

Ի գիտություն

Քոլեջը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև 10%-ին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ արդյունքները, իր միջոցների հաշվին ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցել ուսման վճարը.

Սոցիալապես անապահով ուսանողներին

Միակողմանի ծնողազուրկ ուսանողներին,

Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,

Վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,

Լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,

Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին,

Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

Պետության կողմից ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) տրվում է, ԸՍՏ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ, առկա ուսուցմամբ ուսումնառող՝

1) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին.

2) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներին, ընդ որում՝ սույն ենթակետի իմաստով սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված բնակավայրերի ուսումնական հաստատությունների ուսանողները, ինչպես նաև այդ բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես այդտեղ բնակվող ուսանողները.

3) մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին. մարտական գործողություններին մասնակցությունը զինված ուժերի կազմում հավաստվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կամ ծառայության՝ քաղաքացու զինվորական հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանման (զինվորական կոմիսարիատ) կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա կամ զինվորական հաշվառման գրքույկում համապատասխան նշմամբ, իսկ այլ զորքերի կազմում՝ համապատասխան լիազոր պետական մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի միջոցով.

4) երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին.

5) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ: